ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ | № 12, 1953 | Общественные науки

Գ. Խ. Ստեփանյան

ՆԿԱՐԻՉ ՄԱՆԱՍՆԵՐԸ

(Նյութեր հայ կերպարվեստի պատմության)

Սովետական Հայաստանում, հատկապես արվեստի ինստիտուտում խոշոր աշխատանք է կատարվում հայ մշակույթի պատմության հետազոտման ուղղությամբ։ Արդեն լույս են տեսել մեծ ու փոքր մի շարք աշխատություններ հայ ճարտարապետության, թատրոնի, երաժշտության ու նկարչության վերաբերյալ։ Նյութի այդպիսի կուտակումից հետո միայն հնարավոր պիտի լինի անցնել հայ արվեստի տարբեր ճյուղերի պատմության սիստեմատիկ ու ամբողջական շարադրանքին։

Հետազոտման այս շրջանում օգտակար կարող են լինել այն բոլոր տվյալները, որոնք վերաբերվում են անցյալին և քիչ ծանոթ են մեր բանասերներին։

Ներկա հաղորդմամբ մեր նպատակն է համառոտ տեղեկություններ տալ Թուրքիայում գործող հայ նկարիչների մի գերդաստանի մասին, որը մոտ երկու հարյուր տարի կապված լինելով սուլթանների հետ, ունեցել է նկատելի գործունեություն։

Դա Մանասների գերդաստանն է։ Ինչպես Պալյան գերդաստանի ներկայացուցիչները երկար տասնամյակներ եղել են արքունի ճարտարապետներ, Տատյանները՝ վառոդապետներ, Տյուզյանները՝ ոսկերիչներ, Մանասներն էլ եղել են սուլթանների պաշտոնական նկարիչները՝ 17—19-րդ դարերում։

Մանասների վերաբերյալ ունենք տպագիր բավականաչափ առատ նյութ։ Մեր օրերում այդ մասին առաջինը գրել է հայտնի արվեստաբան Արմենակ Սագըզյանը, օգտագործելով վավերական մի շարք աղբյուրներ, նաև իր լսած ու դիտած փաստերը։ Ազգային հիվանդանոցի «Ընդարձակ տարեցույցի» 1932 թ. տարեգրքում նա տպագրել է «ԺԹ դարու սուլթաններու հայ մանրանկարիչները և Թուրք իշխանուհիի մը մանրանկարը» հոդվածը[1], որտեղ առաջին անգամ խոսում է Մանաս նկարիչների մասին, տալիս որոշ տեղեկություններ։ Նույն տարեցույցի 1933 թ. գրքում նա տպագրել է «Մանասները—հայ նկարիչներու հարստություն մը ԺԸ—ԺԹ դար» հոդվածը[2]։ Սագըզյանը Մանասների մասին խոսում է նաև 1933 թ. Ա. Չոպանյանի «Անահիտում» տպագրած «Հայերու գեղարվեստական գործունեությունը Իկոնիո և Կ. Պոլսո սուլթաններու օրոք» հոդվածում[3]։ Վերջապես՝ նա վերոհիշյալ հոդվածների պարունակած փաստերը սեղմ և կուռ մի շարադրանքով զետեղել է «Pages d'Art Armenien»[4] ֆրանսերեն արժեքավոր աշխատության մեջ, դրան հատկացնելով առանձին մի գլուխ՝ «Մանասները՝ նկարիչների և մանրանկարիչների մի դի-

1 «Տարեցույց ս. փ. Ազգ. հիվանդանոցի», 1932, էջ 144—148։
2 «Տարեցույց ս. փ. Ազգ. հիվանդանոցի», 1933, էջ 52—57։
3 «Անահիտ», 1933, հուլիս—սեպտեմբեր, էջ 30—31։
4 Armenag Sakizian, Pages d'Art Armenien, p. p. 97—101.

նաստիա սուլթանների մոտ 18—19-րդ դարերում» վերնագրով։ Սագըզյանը հրատարակել է Մանասներից մեկի՝ Ռուբենի մի գործը՝ Ֆաթմա Սուլթանի դիմանկարը։

Մանաս նկարիչների մասին խոսում է նաև նկարիչ Օննիկ Ավետիսյանը իր «Հայ նկարիչներ և քանդակագործներ» ֆրանսերեն օգտակար աշխատության մեջ, հիմնականում Ա. Սագըզյանի փաստերը նկատի ունենալով[5]։

Այս գերդաստանի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ ենք գտնում թուրքական աղբյուրներում, մանավանդ Յա. Չարքի «Հայերը թուրքական պետական ծառայության մեջ» գրքում[6]։ Այնտեղ կան շատ կարևոր փաստեր, որոնք անծանոթ են Սագըզյանին։ Բացի այդ՝ Չարքը հրատարակել է Մանասներից մի քանիսի լուսանկարները։

Այս բոլորի վրա եթե ավելացնենք այն, որ Ա. Սագըզյանը օգտագործել է ոչ միայն իր լսած բանավոր տվյալները, տեսած նկարները. այլև գրավոր երկու շատ արժեքավոր աղբյուր՝ իտալացի հոգևորական գործիչ Ջ. Բոդորինիի և ծագումով հայ հայտնի պատմաբան Մուրադջա Դ'Օհսոնի վկայությունները վերոհիշյալ նկարիչների մասին, իսկ Չարքը օգտագործել է արխիվային վավերագրեր, ապա կունենանք բավականաչափ հարուստ նյութ վերոհիշյալ նկարիչների մասին։

Այս գերդաստանը հայ արվեստի պատմությամբ զբաղվողներին հետաքրքրելու է ոչ միայն նրանով, որ սկսած 17-րդ դարի սկզբներից մինչև 19-րդ դարի կեսերը սուլթանների նկարիչները եղել են հայեր, սրանց վրձնին է պարտական պատմությունը մի քանի սուլթանների կենդանագրերով, այլև այն պատճառով, որ այդ նկարիչների գործունեությունը չի պարփակվել պալատական պարիսպների մեջ։ Մեծ մասամբ իրենց կրթությունը ստանալով Եվրոպայում և որպես դիվանագետներ ծառայելով Փարիզի, Վիեննայի, Վենետիկի թուրքական դեսպանատներում, նրանք շփվել են աշխարհիկ կյանքի հետ, ներշնչման աղբյուր ունեցել իրական կերպարներ։ Կապված են եղել նաև հայ իրականության հետ, հայ եկեղեցիների, մատուռների, կրոնական հաստատությունների համար ստեղծել են սրբանկարներ, և վերջապես պատրաստել են հայ հարուստների յուղաներկ դիմանկարները։

Մանաս գերդաստանի որտեղից գալու վերաբերյալ ստույգ տեղեկություններ չունենք. մի վկայության համաձայն նրանց նախահայրը համարվող Արթին Մանասը 16-րդ դարում Կեսարիայից Կ. Պոլիս է եկել և այնտեղ հաստատվել[7]։

Չարքը ասում է, թե թուրքական աղբյուրներում այդ գերդաստանի անվան տարբեր ձևերով՝ Մանաս, Մինաս, Մենաս գրվելն արդյունք է, հին թուրքերենի՝ այսինքն արաբերեն տառերի ձայնավոր չգործածելուն։ Կարելի էր գուցե կասկածել, որ այդ անունը առաջացել է Մինաս բառից, եթե նկարիչներից մեկը չստորագրեր Manasse, որ հայերի կողմից օգտագործված եբրայական անուն է և գալիս է Աստվածաշնչից։

---

[5] Onnig Avedissian, Peintres et sculpteurs Arméniens. Le Caire, 1959. pp. 121. 398.

[6] Y. Çark, Turk devleti hizmetinde ermeniler, Istanbul, 1953, s. 135—145

[7] Նույն տեղում, էջ 135։

Մանասների գերդաստանի գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու շրջանի՝ 1600-ական թվականների սկզբներից մինչև 19-րդ դարի քսանական թվականները և՝ այդ թվականներից մինչև դարավերջը։

Առաջին շրջանի մասին խոսում են Արբա Թոդերինին և Դ'Օհսոնը։

Ջ. Թոդերինին, որը 1781—1786 թվականներին հինգ տարի գործել է Կ. Պոլսում, ուսումնասիրել թուրքական գրականությունն ու արվեստը, վերադառնալով Վենետիկ՝ 1787 թ. հրատարակում է «Թուրքական գրականությունը» աշխատությունը, որտեղ խոսում է նաև սուլթանների պալատական նկարիչների մասին։ Հենց այդտեղ է, որ նա ասում է, թե սկզբներում, սուլթանների պալատական նկարիչները եղել են պարսիկ մանրանկարիչները, որոնք աշխատել են փղոսկրի վրա, թե հետագայում այդ գործը իրենց ձեռքը վերցրին հայերը, և՝ հետևելով եվրոպական ոճին, սկսեցին պատրաստել նաև յուղաներկ կտավներ։.

Ահա թե ինչ է գրել նա ըստ Ա. Սաղրզյանի. «Հայազգի Բարսեղը (Barsic) նկարեց սուլթան Ահմետը (1703—1730), հայազգի Ռափայելը՝ Մահմուդ, Օսման և Մուստաֆա (1730—1754, 1754—1757, 1757—1773) երեք կայսրերուն կենդանագիրները։ Վերջապես Մենասե, որդի Ռափայելի, շինեց իշխող սուլթան Աբդյուլ Համիդի (1773—1789) բնական մեծությամբ քանի մը կենդանագիրները»[8]։

Թոդերինին անձամբ ծանոթ է եղել նկարիչ Ռափայելին, այցելել է Պոլսի Ջեներ թաղամասում գտնվող նրա աշխատանոցը, տեսել մի քանի նկարներ։

Ռաֆայել Մանասի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդել Մուրադջա Դ'Օհսոնը 1790 թվականին Փարիզում հրատարակած Tableau General de l'Empire Ottoman գրքում։ Ըստ նրա՝ Ռաֆայել Մանասը եղել է Բարսեղի որդին, հաջորդել է այդ պաշտոնում իր հորը և մասնագիտական կրթությունն էլ ստացել է Իտալիայում։ Դ'Օհսոնը վկայում է, որ «հայազգի այս նկարիչը այնքան հռչակավոր է եղել, որ համեմատվել է վերածննդի շրջանի մեծ նկարիչ Ռաֆայելի հետ «իր դարուն Ռաֆայելը կը նկատվեր»։

Իհարկե այս չափազանցություն է, հենց նույն պատմիչը, խոսելով Մանասների արվեստի մասին, ասում է, թե այն հեռու էր իտալական և ֆլամանդական արվեստից, և դա բացատրում է նրանով, որ մահմեդական Թուրքիայում նկարիչները հնարավորություն չունեին օգտագործելու իրենց արվեստը, հարկադրված էին զբաղվել սրբեր նկարելով, քանի որ նկարվելու և նկար պահելու սովորությունը հազվադեպ էր այդ երկրում, սակայն, այս բոլորով հանդերձ Դ'Օհսոնի, Թոդերինիի, թուրքական արվեստների թանգարանի դիրեկտոր Խալիլ Էթհեմի և արվեստագետ Արմենակ Սաղրզյանի վկայությամբ,— որոնք բոլորն էլ տեսել են նրանց նկարներից նմուշներ,—Մանասները եղել են կարող արվեստագետներ։

Սրանք են Մանասների գերդաստանի այն սերնդին վերաբերող փաստերը, որոնց գործունեությունը հասնում է մինչև 18-րդ դարի վերջերը։

Որոշակի տվյալներ չունենք Աբդուլ Համիդ Ա-ին հաջորդող Սուլթան Սելիմ Գ-ի և սուլթան Մուստաֆա Դ-ի ժամանակաշրջանի պալատական նկարիչների մասին։ Ա. Սաղրզյանը հիշատակում է Ջենոր Մանասին, որն ունեցել

8 «Տարեցույց ս. փ. Ազգ. հիվանդանոցի», 1933, էջ 55։

է չորս որդի, չորսն էլ նկարիչ՝ Ռուբեն, Սեպուհ, Գասպար և Աղեքսանդր[9]։ Եթե ճիշտ ընդունենք այս վկայությունը, ապա կարող է ստացվել, որ սուլթան Սելիմի և Մուստաֆայի օրոք աշխատել է Ջենոբը, քանի որ նրա որդիներից Սեպուհը արդեն գործում էր հաջորդ սուլթանի՝ Մահմուդ Բ-ի ժամանակ։ Սակայն Չարքը Ջենոբին հիշում է որպես 1850—60-ական թվականների նկարիչ։ Կամ սխալ պետք է համարել Սագըղյանի տվյալները, կամ պետք է ընդունել երկու Ջենոբ, որոնցից մեկը ապրել է 18-րդ դարի վերջին տասնամյակներում, մյուսը՝ 19-րդ դարի 50—60-ական թվականներին։ Սագըղյանի այն հավաստիացումը, թե Ջենոբը եղել է Վիեննայի օսմանյան դեսպանատան առաջին քարտուղար, ավելի կարող է վերաբերվել 1850-ական թվականներին ապրող Ջենոբին, քան Սելիմի օրերին, երբ դեռ հայերը դիվանագիտական նման պաշտոններ չէին վարում։

Փաստերն ավելի վավերական են Մանասների այն սերնդի մասին, որը գործել է 19-րդ դարի առաջին կեսին սուլթան Մահմուդի, սուլթան Մեջիդի, սուլթան Ազիզի գահակալության տարիներին։

Սուլթան Մահմուդը (1808—1839), որը վերացրեց ենիչերիությունը և որոշ ռեֆորմներ հռչակեց, մասնակի հարաբերություն սկսելով Եվրոպայի հետ, որպես պալատական նկարիչ պահում էր Սեպուհ և Մաքսուտ Մանասներին, որոնց նա ուղարկել էր Իտալիա՝ մասնագիտական կրթություն ստանալու։ Մահմուդը արհամարհելով կրոնական նախապաշարումները, որոնց համաձայն նկարվելը համարվում էր սրբապղծություն, հրապարակ է հանում մի շքանշան զարդարված իր նկարով, որ կոչվում էր «Թասվիրի Հյումայուն» (կայսերական նկար)[10]։ Այդ շքանշանից, որը պատրաստել էր Սեպուհ Մանասը (1816—1889), շնորհվում են բարձրաստիճան մի շարք գործիչների, այդ թվում Հարություն ամիրա Պեզճյանին։

Սեպուհ Մանասը 30 տարի եղել է Փարիզի թուրքական դեսպանատան առաջին քարտուղարը։ Նա 1858 թ. սուլթանի նկարը Շվեդ-Նորվեգիայի կայսրուհուն տանելու պատվին է արժանացել և այդ պետությունից ստացել է հատուկ շքանշան։ Արխիվային մի փաստաթղթից, որը մեջ է բերում Չարքը, պարզվում է, որ 1859 թ. Ֆուատ փաշան Փարիզ՝ թուրքական դեսպանատան գործոն անդամներից Հակոբ Կրճիկյանին ուղղած մի նամակով առաջարկում է Սեպուհ Մանասին՝ նույն պաշտոնում, նույն ռոճիկով մնալու պայմանով տեղափոխվել Պոլիս[11]։

Յա. Չարքը բերում է մի հետաքրքիր փաստ էլ։ Նա գրում է, թե 1836 թ. անգլիացի մի զբոսաշրջիկ, օրիորդ Պարդոենին, զինվորական դպրոցն այցելելիս, այնտեղ սուլթանին վերաբերող մի ցուցասրահում տեսել է սուլթանի մի յուղաներկ նկարը, կատարված թանձր գույներով, հայ նկարիչ Մանասի կողմից[12]։

Սեպուհից Պոլսի հնությունների թանգարանում կա Արդուլ Մեջիդի և Արդուլ Ազիզի մանրանկարները, մեկը ստորագրված Մանաս, մյուսը՝ Սեպուհ Մանաս։ Ըստ երևույթին նա Փարիզում թուրքական դեսպանատանն աշխատե-

[9] Armenag Sakizian. Pages d'Art Armenien, էջ 99։

10 Նույն տեղում, էջ 99։

[11] Çark, էջ 140։

[12] Նույն տեղում, էջ 137։

›իս է պատրաստել սուլթանների նկարների կրկնօրինակները։ 1854 թ. վերջերին Պոլսից Փարիզ, Սեպուհ Մանասին ուղղված մի հեռագիր գոհունակություն հայտնելով Արգուլ Մեջիդի մանրանկարի համար՝ նկարչին պարգևում է մի շքանշան և նույն նկարից հինգ օրինակի պատվեր է տալիս, յուրաքանչյուրի համար որպես նվեր խոստանալով 1500 ղրուշ։

Ա. Սագրզյանը և Յա. Ջարքը խոսում են նաև մի քանի այլ Մանասների մասին, որոնք ունեցել են գիվանագիտական գործունեություն և միաժամանակ զբաղվել են նկարչությամբ։ Դրանք են Ռուբեն, Գասպար, Ալեքսանդր, Ժոզեֆ Մանասները։

Սրանց մեջ ամենից նշանավորը Ռուբեն Մանասեն է, որը 1869 թ. եղել է Թուրքիայի ընդհանուր հյուպատոսը Միլանում։ Իր նկարները ստորագրել է Rubens։

Ջարքը՝ նշելով, որ սուլթան Մեջիդի օրով կրոնական մոլեռանդության հետևանքով միառժամանակ դադարեց սուլթանների նկարները զանազան տեղեր ուղարկելու սովորությունը, բայց շարունակվեց ուղարկվել թուրքական դեսպանատներին, ասում է, թե «այս նկարների մի մասը Փարիզում թուրքական դեսպանատան քարտուղար Ռուբենն էր պատրաստում»։ Նա է պատրաստել ոչ միայն Փարիզի, այլև Բեռլինի և Վիեննայի թուրքական դեսպանատների համար «Թասֆիրի հումայունի» մեկական օրինակ՝ յուրաքանչյուրի համար ստանալով հինգ հազար ֆրանկ։

Մյուս Մանասների վերաբերյալ ավելի քիչ փաստեր են հասել մեզ։

Սրանցից Աղեքսանդր (Ալեքո) Մանասը 1839 թ. ավարտել է Վիեննայի նկարչական ակադեմիան։

Ա. Սագրզյանը այս գերդաստանի վերջին շառավիղն է համարում Ժոզեֆ Մանասին, որը եղել է Ռուբենի և Սեպուհի հորեղբորորդին։ Սա թողել է ավելի մեծ թվով գործեր, այդ թվում Գերմանիայի Օգուստա Վիկտորիայի մեկ մանրանկարը։ Նա պատրաստել է նաև Դեյի Ֆուատ փաշայի յուղաներկ պորտրեն։

Մենք ծանոթացրինք սերնդե սերունդ գործող մոտ տասը Մանասների։ Արքունի այդ նկարիչները ունեցել են բեղուն գործունեություն և երկու հարյուր տարվա ընթացքում պետք է որ ստեղծեին մի քանի տասնյակ կտավներ, էլ չենք խոսում մանրանկարչական արվեստի մասին։

Արդ՝ ի՞նչ է հասել մեզ այդ բոլորից։ Կ. Պոլսի արվեստների թանգարանի դիրեկտոր Խալիլ Էթհեմը, որ 1924 թ. հրատարակել է մի աշխատություն թանգարանի հարստությունների մասին, վկայում է, որ իրենց մոտ պահպանվում են Մանասների ստեղծագործություններից մի քանիսը, ստորագրված արաբերեն Մանաս։

Մեր հիշատակած Թոդերինին Ռաֆայել Մանասի արվեստանոցում տեսել է մի փոքրիկ Վենյուս «լավ գծագրված և լավ ներկված»։ Բացի այդ՝ նա գրում է. «Տեսա ևս պալատական աղջիկ մը, մեծադիր, որ ափսեի մեջ կը կրեր կտրված ձմերուկ մը, գույները և գծագրությունը լավ էին, աղջիկը զարդարված էր գոհարեղեններով, մանյակներով ու ապարանջաններով, եղունգները կարմիր ներկված էին ըստ թուրք կանանց սովորության»[14]։

Մանասների վրձնին պատկանող մի քանի նկարներ էլ տեսել է Արմենակ Սագրզյանը։

---

14 «Տարեցույց Ազգ. հիվանդանոցի», 1933, էջ 54։

«Ես ալ բախտը ունեցա տեսնելու,— գրում է նա,— Թոփ Գափուի թանգարանին հավաքածուներեն մեկուն մեջ թիվ 37070 գեղագիր արձանագրությամբ մը Ռաֆայելին վերագրված չորս նկարներ»[15]։

Ռաֆայել Մանասի այդ չորս նկարները մեզ համար ավելի մեծ արժեք են ներկայացնում, քանի որ նրանք պալատի կենցաղից դուրս՝ իրական կյանքն են արտահայտում։ Նկարներից մեկը ներկայացնում է մի երիտասարդի՝ հագին շալվար, ձեռքին վարդի ջրի ման։

Նկարներից երկուսը կանացի կերպարներ են՝ էնթերի հագած։ «Ասոնցմե մին նոնագույն էնթարիով և կանաչ գոտիով է, կուրծքը բոլորովին բաց, միայն մասամբ ծածկված բեհեզյա թափանցիկ շապիկով մը, մյուսը կապույտ հագուստով, մեկ ձեռքը բռնած է աղեղ մը և կոնակին վրա կը կրե կապարճ մը ոստներ։ Ռափայել, որուն ինչպես որ տեսանք անծանոթ չեին դիցաբանական նյութերը, կերևի ներկայացուցած է Արտեմիսը արևելյան ոգեստով»[16]։

Ինչպես նախորդ էջերում ասացինք, Ռաֆայելը իր ուսումը ստացել էր Իտալիայում, ծառա եղ էր Եվրոպայում, շփվել աշխարհիկ կյանքին։ Հասկանալի է, որ նրա վրձինը չէր կարող կաշկանդվել միայն պալատով ու պալատականներով և դժվար թե նա նման մի քանի նկարների համար համարվեր «իր գարուն Ռաֆայելը»։

Մանասների ստեղծագործությունների մեջ բացառիկ արժեք ներկայացնող մի գործ է սուլթան Մեջիդի դուստր Ֆաթմա սուլթանուհու դիմանկարը, որը փղոսկրի վրա պատրաստել է Ռուբեն Մանասը։ Այս գործը, որ հրատարակվել է մի շարք աղբյուրներում, այդ թվում Ա. Սագրզյանի ֆրանսերեն և Չարքի թուրքերեն աշխատությունում[17], ուշագրավ է ոչ միայն որպես արվեստի գործ, այլև որպես պալատական մի աղջկա տարազը ցուցադրող նկար, քանի որ բացառիկ երևույթ էր մի թրքուհու նկարի պատրաստումը այդ թվերին։ Ռուբենը այն փորագրել է 1850 թ., երբ աղջիկը տասը տարեկան էր։ Ունի ուշագրավ արդուզարդ և տարազ։

Նկարիչների այս գերդաստանի գործունեությունը անշուշտ սերտ ունի հայ կյանքի հետ։ Դեռևս Թոդորինին վկայում է, որ նրանք հիմնականում պատրաստում էին սրբապատկերներ, եկեղեցիների և մատուռների համար։ Հասկանալի է, որ առաջին հերթին նկարներ պիտի պատրաստեին Կ. Պոլսի, գուցե և այլ քաղաքների հայկական եկեղեցիների համար։

Բացի այդ՝ նրանք անշուշտ պատրաստել են հայ հարուստ ամիրաների յուղաներկ դիմանկարները։ Մեզ հասել են 18-րդ դարի վերջերի և 19-րդ դարի առաջին քառորդի մի շարք ամիրաների, նույնիսկ նրանց ընտանիքի անդամների յուղաներկ նկարները։ Հնարավոր է, որ դրանց գեթ մի մասը պատրաստված լինի Մանասների կողմից։

Մենք թվարկեցինք այն բոլորը, որ մեզ հասել են նկարիչ Մանասներից և Գր. Կեոչեոզլուից։ Տարակույսից վեր է, որ հետագա ուրոնումները հատկապես Պոլսի թանգարաններում և հարուստ ընտանիքներում կատարված պրպտումները կարող են ի հայտ բերել այս ուշագրավ նկարիչներին պատկանող այլ նկարներ։ Համենայն դեպս սա մի նյութ է, որով զբաղվելու դեպքում մենք կունենանք հայ նկարչության պատմության ուշագրավ էջերից մեկը։

15 Նույն տեղում։

16 «Տարեցույց ս. փ. Ազգ. հիվանդանոցի», 1933, էջ 54—55։

17 A. Sakizian. Pages d'Art Armenien. fig 75, Çark. էջ 136 և այլն։